

այսմու ատենին ծեղրէն առնուած կ'ըլլայ: Խորհրդարանին մէջ մեծ առաւելութեամբ քուէից ընդունուեցաւ օրէնքն թէ եւ վճարեակ ատենին տեղեկատուն (référént) ամէն միջոց ընդդէմ գործածեց: Այժմ կը մնայ որ ծնարկոյտն ալ ընդունի օրէնքը, ուր քիչ շատ արգելքներ պիտի հանդիպին կ'երեւայ:

Գերմանիան ալ թաղեց իւր վաղեմի պետական դիւանապետը գլխաւորի: Կապիւրի Բիզմարկի անմիջական յաջորդն եղաւ, անոր այնպէս անյուսակից անկմանէն ետքը: — Ընդհանրապէս Գերմանիոյ մէջ հոսանք մը կը նշմարուի՝ Գաղղիոյ կերպով մը աւելի մերձենալու եւ հետը քաղաքական հասկացողութիւն մը հաստատելու: Վերջին օրերս՝ հոնէլոյէի՝ այժմու Գիւանապետին նրաժարականին վրայ շատ խօսուեցաւ, սակայն կ'երեւայ թէ անշիմն խօսքեր են ամբողջ, նոյն իսկ յաջորդը որոշուած է եղբո՛ր՝ իշխան Ռաժիւի:

Ռուսիոյ ոչ միայն իւր սերերիական երկաթուղին ամենայն հապճեպով կ'փութայ աւարտել այլ նաեւ Ծննաստանի մէջ նոր սկսածին վրայ մեծ փոյթ կը ցուցնէ, որուն համար անդադար Բոսփորի ափանց առնելէն նաեւր կ'անցնին ատարձով եւ հազարաւոր գործաւորներով՝ Ծննաստան անցնելու համար: Ռուսաստան թալիէն-վան տուրք հանգանակած միջոցին տեղացւոց մէջ խռովութիւն ծագեցաւ, եւ Ծննաստանի այրի կայսրուին եւ կառավարութիւնն իսկ բողոքեց՝ իբր թէ Ռուսիա ըստ դաշանց տուրք առնելու իրաւունք չունի:

Օսմանեան Պետութիւն: Մակեդոնիա՝ ուր ոգիներն երթալով կը գրգռուին՝ խռովութեանց առաջն առնելու համար եւ յամենայն դէպս պատրաստ գտնուելու համար՝ Տանկաստան գլխաւորաբար Բալկանեան պետութեանց սահմաններուն վրայ մեծագումար բանակներ կը զետեղէ, եւ անընդհատ ռազմամթերք կը խալէ: Իպէթի առնաւուտ ցեղերը մէջընդմէջ միմարանած են Պետութեան պատերազմի կոչին վրայ քանի մ'օրուան մէջ քանի մը հարիւր հազար զինուոր եւ պաշիպոզուկ ճամբայ հանելու: Սակայն կը յուսանք որ խաղաղութիւնն չի վրդովուիր. մանաւանդ որ Ռուսաստան ալ ծեղրէն եկածը կ'ընէ՝ Մակեդոնեան հանդարտեցնելու համար:

Միացեալ Նահանգք եւ Սպանիա: Նրկու ոսոխ պետութեանց մէջ հաստատուած խաղաղութեան դաշնադրութիւնն՝ վերջերս խորհրդարանէն հաստատուելու համար՝ դրուեցաւ պատգամաւորաց առջեւ: Կոմս Ալմէնաս իւր՝ բանակին եւ զօրավարաց վրայ յարձակումները կը շարունակէ, որոնք բնականաբար կառավարութենէ եւ բանակին կողմակիցներէն կը հերքուին: Այս բաւական չէ՝ Սպանիա սկսած է նոյն իսկ իւր ամէնէն նշանաւոր զօրավարները հալածել՝ իբր թէ իրենք եղած ըլլան կրած ահաւոր թշուառութեան պատճառը, այսպէս Տորալ, Սերվերա եւ այլք՝ պատերազմական դատաստանարանին առջեւը պիտի հանուին: Անդիէն Ամիրիկացիք շատ երկար սպասելու են մինչեւ որ իրենց այսպէս շուտով եւ անջան վատրկած յաղթութեան պտուղները վայելելու սկսին: Փիլիպպեան կղզեաց վրայ ապստամբք՝ Ամիրիկացւոց դէմ զենք վերցուցած են. եւ զանոնք որ յառաջ իրենց փրկիչներն հռչակած էին՝ իրաւ իրենց ոխերիմ՝ Թշնամի կը համարին:



ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՌՈՍՏՈՒՄԵՆԿԱՆ

ՊՏՏՄԱՅԻՄ — Պարսկաստանի Հայերը, Ներսէս անցեալը, Ներկան եւ ապագան. 65: — Ծոխաբնթուպոյսեցիք՝ կ'զուք քանի մը ծանրաբեռնութիւններէ ազատելու կը շնան. 69:

ԳՐԱՅԻՄ — Խիկար եւ իւր իմաստութիւնն. 74: ԳՆՆՍԱԳՐԱՅԻՄ — Բոյիչէ ծոքթ. Յակոբ Պէյ Ծովահանեան. 80:

ԼԵՂՈՒՄԱՐՆԱՅԻՄ — Գրիգորի Թագման խնդիրը. 83: ԵՆԵԼԵՑԵԼԷ

ՆՈՐ ՎՐԱՏԱՐԱՅԻՄՈՒԹԻՒՆ. 84:

ԱՅԳԱՅՈՒ ԹԵՐԵԹԵՐ ԺԱՂՉՓՈՒՆՆԷ — 1. Բարձր շքանշաններով պատուուած ազգայինք: — 2. Բարձրադրութիւնք: — 3. Բանասէր — նոր պարբերաբար մը: — 4. Գաւկ մը Փրիդրիկ Միւլլերի գերեզմանին վրայ: — 5. Տղանկաբեր Ազգ. Զինանշանոցի Զինուոր: — 6. Լազարեան մեմորաւն Արեւելեան Լեզուաց. 91:

ԲԱՂԲԱՅԻՄ ԵՆՍՈՒԹԻՒՆ 94:



ՎՐԱՏԱՐԱՅԻՄ ԵՄ ՊՏՏՄԱՅԻՄԱՆՈՒ ԽՄԱՐԱԿՐ

Դ. ՌԱՓԱՅԵԼ Կ. ՊԱՐՈՆՆ

ՎԻՆԵՆԱ, ՄԻԻԲԵՐԵՆԱ ԵՂԱՐԱՆ